

թէ այս և թէ բոլոր յիշեալ բարոյական թշնամիներն դէմ յաղթութիւն տանելու համար։ Իսկ զոհ կարելի է անուանել այն միայն, ինչ որ մեր աչքում գին ունէր։ Եթէ մենք ճգնական հայեացքով նայէինք աշխարհի վերայ և ունայն ու առ ոչինչ համարէինք նորա բարիքները, զոհաբերութեան խնդիր չէր լինի այլ ևս։ Բայց ս. Գիրքն ուսուցանում է, որ «Տիրոջն է երկիրը և նորա վերայ եղած ամէն ինչ», որ Արարչի ձեռքի տակից ելած ամենաշնչին իրն անդամ իւր տեղն ու արժէքն ունի և իւր պատշաճ գործադրութիւնը պէտք է գտնէ մեր ձեռքով։ Ապա ուրեմն մի կողմից պէտք է ոչինչ չարհամարհուի և միւս կողմից ոչինչ այնպիսի նշանակութիւն չստանայ մեր աչքում, որ չկարողանայինք հրաժարուել նորանից, երբ հարկը, երբ մեր բարոյական պարտականութիւնը, երբ Աստուծոյ պատուէրը պահանջէ Յամենայն դէպս այն աւետարանը, որ անձնուրացութիւն ու անձնադոհութիւն է սպասում իւր հետևողներից՝ ամենամեծ բանն «իւր մարմինն այրել տալը և իւր ունեցածն աղքատներին բաժանելը» չի համարում։ Սիրոյ աւետարան է նա և գնահատում է միայն սիրոյ զօհը։

Կ. Վ.



ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

Գլուխ Գ.

ՅԱԿՈԲ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԶՈՒՂԱՅԵՑԻ

(1655—1680)

Փիլիպպոս սրբազան կաթողիկոսի թաղման առթիւ ս. Էջմիածնում հաւաքուած հոգևորականները և աշխարհական-

ները առանց տատանուելու ընտրում են Յակոբ Զուղայեցուն և մի քանի շաբաթ յետոյ օծում են կաթուղիկոս, 1655-ի ապրիլի 8-ին:

№ 894 Ճաշոցի յիշատակարանից իմանում ենք, որ Յակոբ Զուղայեցու նախնիքը Շիրակից են գաղթել, իսկ ինքը ծնունել է Շօշում. մինչ Զաքարիա պատմիչը համարում է նորան «յԱսպահանայ ի գիւղաքաղաքէն Զուղայու, որդի բարեպաշտի»: Այսպէս թէ այնպէս կարևորն այն է, որ Յակոբ իւր կրթութիւնը ստացել է Զուղայի դպրոցի առաջին հիմնադիր Խաչատուր Կեսարացու մօտ. «Եւ ուսաւ ի նմանէ զամենայն վարս առաքինութեան և զամենայն գիտութիւնս աստուածային գրոց և եղև կուսակրօն քահանայ», ասում է Զաքարիան: Ուսուցչի մահուանից յետոյ նա եկաւ Էջմիածին, և Փիլիպպոս կաթուղիկոսը նորան վարդապետական իշխանութեան զաւաղան տալով՝ «Առաքեաց աշխարհն յունաց ի նուիրակութիւն»: Վերադառնալուց յետոյ՝ «Կացոյց զնա կաթուղիկոս (Փիլիպպոս) աթոռակալ և հրամանատու»: Նոյնն է ասում և Բաղիշեցին, որը Յակոբին բոլոր վարդապետների գլուխն էր համարում: Թէ ինչքան ժամանակ տեղապահութիւն է անում, յայտնի չէ, միայն Փիլիպպոսի վերջին տարիներում նա շննցնում է Ստեփաննոս Նախավկայի վանքը, և այնտեղ էր, երբ սուրհանդակով հրաւիրուում է կաթուղիկոս լինելու:

Բարենորոգչական դպրոցի աշակերտ լինելով՝ հայրապետական աթոռ նստելուց յետոյ, նա պիտի կարողանար այդ դպրոցից ելած նշանաւոր անձերին գնահատել և ասպարէզ տալ: Սիւնեաց անապատը նորա օրով մի ծանր դժբախտութեան հանդիպեց. երկրաշարժը քար ու քանդ արաւ այդ անապատը, բայց «Յակոբ կաթուղիկոս բերեալ զմիաբանս ի ներքոյ Տաթևու և անդ հիմնարկեաց զանապատն և եկեղեցին, բայց յետոյ աւարտեաց զայն Արստակէս վարդապետ»: Այս նոր անապատը կոչուեցաւ «Մեծ անապատ», իսկ նախկինը «Հարանց անապատ»: Սակայն նորը հնի տեղ չկարողացաւ բռնել, թէև դեռ մօտ մի դար իր գոյութիւնը պահպանեց: Էջմիածնի և նոր Զուղայի դպրոցները դէպի իրենց

էին քաշում լաւագոյն ոյժերը. վայելելով աւելի մեծ հովանաւորութիւն և գտնուելով լաւագոյն պայմաններում՝ նորա իրենց մէջ կենդրոնացրին ժամանակի գիտութիւնը, մինչ այդ անսպասելի կտրուած լինելով միւսներէից՝ նոր հոսանք չընդունեց իր մէջ, թէև հնի նման էլի տալիս էր կրօնական—եկեղեցական հմտութիւն իր աշակերտներին: Եջմիածինն ու Զուգան անգադար փոխադարձ յարաբերութեան մէջ էին: Նոր—Զուգայի դպրոցը, Եջմիածնի դուստր լինելով և մօտ լինելով Պարսկաստանի մայրաքաղաքին, յարմարութիւններ ունէր աւելի մեծ գիտութեան պաշար հաւաքելու: Յայտնի է, որ ժամանակի ամենագիտնական անձը, Սիմէոն Զուգայեցին, որին գովասանելու համար, զրեթէ բոլոր յիշատակարան գրողները և պատմագիրները խօսք չեն գտնում: Զուգայի դպրոցից էր, եկել էր Եջմիածին և Փիլիպպոսի ժամանակ դասախօսում էր: Նորա դասախօսութեան ունկնդրում էին Եջմիածնի բոլոր միաբանները: Երեւանի առաջնորդ կարգուելով՝ նա զրեց կամ յօրինեց բազմաթիւ գրքեր. օր. Տրամաբանութիւն, Պրոկղ իմաստասէր և Հոգեաց զիրք: Յակօր կաթողիկոսը նորան ուղարկեց արեւմտեան հայերի մէջ քարոզութեան ու նուիրակութեան պաշտօնով, բայց նա 1657-ին այդ պաշտօնի մէջ մեռնում է Թոգատում:

Եջմիածնի դպրոցի նշանաւոր ներկայացուցիչն է Իլվովցի Ստեփաննոս վարդապետը, որը Նիկոլի շահատակութիւնների ժամանակ Լեհաստանից գալիս է Եջմիածին: Նա իւր հայրենիքում նախապէս սովորել էր լեհերէն և քերականութիւն, իսկ Եջմիածնում սովորում է հայերէն և Փիլիպպոս կաթողիկոսից ստանում վարդապետական գաւազան: Սա թարգմանում է Յովսէպոսի «Պատերազմ հրէից», այլև Դիոնիսիոս Արիոսականացու գրուածները՝ երկրորդ անգամ, զիւրահասկանալի ոճով. ապա Դիրք պատճառաց, Հայելի Վարուց ևլն: Այս նշանաւոր վարդապետին ևս արժանապէս գնահատում է Յակօր կաթողիկոս և նորան իւր տեղապահ է կարգում:

Իլվովցի վարդապետին գրեթէ ղուգապատիւ է Առաքել Դավրիժեցին՝ Փիլիպպոս կաթողիկոսի աշակերտներից: Սա իւր

վարժապետի յորդորով գրում էր մի պատմութիւն, սկսած 1602 թուից մինչև Փիլիպպոսի մահը: Յակոբ կաթողիկոսը խնդրում է նորան շարունակել իւր պատմութիւնը, որ և հասցնում է մինչև 1662 թիւը: Այս պատմագրութիւնը իւր ժամանակի համար անգնահատելի մի գանձ է: Սորա հեղինակը, որը երկար ժամանակ նուիրակութեան կամ այլ պաշտօնով տեղից տեղ ման է եկել, վախճանուել է, ինչպէս իւր գերեզմանաքարի արձանագրութիւնը ցոյց է տալիս, 1670-ին:

Պակաս տեղ չի բռնում Զաքարիա սարկաւազ պատմիչը, որ Յովհաննավանքում երկար ժամանակ ուսուցիչ է եղել և թողել է երեք փոքրիկ հատորով մի պատմութիւն՝ հասցրած մինչև Նահապետ կաթողիկոսը, և Զաքարիա վարդապետ Վաղարշապատցին, որ, Զարբանալեանի և Ալիշանի ասելով, թողել է Մովսիսի, Փիլիպպոսի և Յակոբի ժամանակուայ պատմագրութիւն: Այդ գիրքը մեր ձեռագրատան մէջ չկայ, բայց նորանից մնացել են մի քանի յիշատակարաններ, որոնց լեզուն ցոյց է տալիս, որ խիստ ճոռոմախօս է եղել:

Այստեղ յիշեցինք Լժմիածնի դպրոցի նշանաւոր ներկայացուցիչներին, բայց դորանով չվերջացաւ: Յակոբ կաթողիկոսի ժամանակ Լժմիածնի դպրոցը ծաղկած էր և միաբանութիւնը կազմուած էր գիտնական անդամներից: Ստեփաննոս Իվովցու ձեռքով գրած Դիոնիսիոսի գրքի յիշատակարանից իմանում ենք, որ Լժմիածնի միաբանութիւնն է խնդրել իրեն թարգմանել այդ գիրքը, իսկ յետոյ աւելացնում է, թէ Լժմիածնի միաբանները «Ն հրահանգս իմաստասիրութեան կրթէին զանձինս իւրեանց, քանզի զայնու ժամանակաւ (1670) բաշումք էին երեւելի վարդապետք քաջաբանք, բանաստեղծք, աստուածային գրոց գիտունք և հրմուտք, յորոց մի էր Առաքել վարդապետ, քաջ բազունի և վիպասան»: № 891 ձառոցի յիշատակարանն ևս նոյնն է վկայում ասելով, թէ Յակոբ կաթողիկոսի ժամանակ բազմութիւ մատեաններ են հաւաքուել, որոնցով զբաղւողները և պարագլուխները շատերն են եղել:

Լժմիածնի դպրոցից յետ չէր Զուղայի դպրոցը: Այդ

գպրոցի նշանաւոր ներկայացուցիչներէց մէկը ինքը Յակոբ կաթողիկոսն էր, որ մի առ ժամանակ Զուղայի առաջնորդ էլ էր եղել: Սորա ընկեր և յաջորդ Դաւիթ եպիսկոպոսը նոյնպէս նշանաւոր անձերից է. սա շինում է նոր—Զուղայի Ամենափրկիչը, մի հոյակապ վանք, իւր բոլոր պարագաներով և գպրոցով: Նորա բազմամեայ առաջնորդութիւնը, որ տևեց մինչև 1683 թ.-ը, այդ գպրոցի ամենածաղկած շրջանն եղաւ: Սորա աշակերտներից են երկու Յովհաննէս և Ոսկան վարդապետները: Առաջին Յովհաննէսը Ներսիսյում ապագրութեան արուեստ սովորելով՝ մի տպարան առաւ և մի զիրք տպելուց յետոյ փոխադրեց Զուղայ և տպեց եկեղեցական գրքեր: Բայց այդ գործը չյարատևեց, որովհետև Ապահանում բուն դրած կաթողիկոսները, զանազան գրպարտութիւններ բարդելով, Շահ Հիւսէինի հրամանով գործը խանգարում են: Ինքը Յովհաննէսն Ազուլիսի Թովմա առաքեալի վանքի առաջնորդ կարգուեց և այնտեղ էլ սպանուեց աւազակ թուրքերից: Նրկորդ Յովհաննէսը, Մրգուզ մականուամբ, նկարիչ էր և զիտէր պարսկերէն, արաբերէն, այդ լեզուներով թարգմանեց աւետարանը և Շահ Հիւսէինի առաջ ճարտար կերպով պաշտպանեց քրիստոնէական հաւատը: Սա իւր ժամանակին ահագին հեղինակութիւն ունէր ու ամենագիտնական անձն էր. գրել է արամեարանութեան գրքեր, մեկնութիւն, հակաճառութիւն Լուսավիկ եպիսկոպոսի, մեռել է 1706 թուին. ունեցել է բազմութիւ աշակերտներ՝ Աղէքսանդր, որը 18-րդ դարի առաջին կաթողիկոսն եղաւ, Սիմէոն Զուղայեցին և Աստուածատուր վարդապետը, որի աշակերտ Բաղդասար դպիրը Յովհաննէս Կոլոտի պատրիարքութեան ժամանակ Կ. Պոլսի գպրոցն է առաջ բերում:

Վերև մենք յիշեցինք, որ Դաւիթ աշակերտներից էր Երևանցի Ոսկան վարդապետը, որի կեանքը և գործունէութիւնը կապուած է տպագրութեան պատմութեան հետ:

Հայկական տպագրութիւնը իւր սկիզբն առնում է 1567 թուին Միքայէլ Սեբաստացու և Աբգար Թոգատացու օրով, բայց մինչև Յակոբ կաթողիկոսը հայերի մէջ արմատ չէր բռնել և օգտուէտ չէ եղել, այլ հաղիւ մի քանի գրքեր

էին տպուել փորձի ձեռքով: Յակոբ կաթուղիկոսի ժամանակ այդ գործը լուրջ և առական բնաւորութիւն է ստանում, և դորա համար պարտական ենք անշուշտ Ջուղայի դպրոցին, որի աշակերտների ձեռքով տպագրութեան արուեստը սկսում է նշանաւոր օգուտներ տալ: Այս դպրոցի հիմնադիր Խաչատուր Ահարացին, ինչպէս տեսանք, ձեռք բերեց ժամուէլ և տառեր և փոխադրելով Ջուղա սկսեց տպել մի քանի գրքեր: Բայց այս տպարանի տառերը վատ էին. դորա համար ուղարկուեցաւ Եւրոպա Յովհաննէս Մրդուզ, որպէս զի արուեստը կատարելագործէ: Այդ միջոցին Յակոբ կաթուղիկոսն ևս իր ուսուցչից իմանալով տպագրութեան կարեւորութիւնը, հէնց որ Աթոռ բարձրացաւ, ուղարկեց Եւրոպա Փիլիպպոս կաթուղիկոսի Նօտար Մատթէոս Ծարեցուն գրքեր տպելու նպատակով: Վերջինս նախ գնում է Հռոմ, ապա Ամստերդամ, որտեղ տպարան ձեռք բերելով, տպում է «Յիսուս—Որդի» ողբերգութիւնը 1660 թ.ին: Դժբախտաբար սա շուտով մեռնում է և տպարանը մնում է Ոսկան վարդապետի եղբոր Աւետիս վաճառականի ձեռքին: Այս Աւետիսը տպարանը նուիրում է Էջմիածնի և Ս. Սարգսի անուան: Յիսուս—Որդու յիշատակարանում, որը գրել է Աւետիսը, նա յայտնում է հետեւեալը. «Վասն որոյ աշխատանք ունիմ ի վերայ այս գործոյս, եթէ գրամով և թէ այլ օգնութեամբ*», ուխտադիր եղեր եմ, որ մինչև իմա՛հ պիտի որ աշխատիմ ի վերայ Ս. Էջմիածնուն»: Նա Յիսուս—Որդուց յետոյ տպում է Սաղմոս, Ժամագիրք և Շարական: Շատ չանցած նա նիւթական անձուկ գրութեան մէջ է ընկնում և Էջմիածնից օգնութիւն է խնդրում. Յակոբ կաթուղիկոսը 1662-ին ուղարկում է Ոսկանին իւր եղբորն օգնելու՝ յանձնարարելով յատկապէս տպել Աստուածաշունչը: Սա Ամստերդամ հասնելով (1666—1668) գլուխ է հանում հայրապետի յանձնարարութիւնը, իսկ մինչ 1670 թիւը 17 գիրք է տպում, որոնց մէջ աչքի են ընկնում Մաշտոց, Նոր Կտակարան, Քերականութիւն, Դավրիժեցի, Խորենացու աշխարհագրութիւն և ընէ

* Պէտք է ասել որ Ծարեցին Աւետիսի հետ ընկերացել էր:

Այս բոլորից յետոյ տպարանը սնանկանում է. Յակոբ կաթուղիկոսը չի կարողանում նիւթական օգնութիւն հասցնել որովհետեւ զբաղուած էր տաճկահայերի խռովութիւններով, որի ժամանակ ինքն ևս փողի պէտք ունէր: Ոսկանը անձարացած ստիպուում է փոխել տպարանը Մարսէլի բայց այստեղ զրէթէ անգործութեան է դատապարտուում կաթուղիկ կղերի ձեռքին գործիք դարձած, իր դաւաճան ընկերների մեքենայութիւնների շնորհիւ: Յուսահատութեան մէջ նա վախճանում է 1674-ին: Շատ սրտառու է նորա վերջին կտակը, որ բերել է Զարբանակեանը քաղուածօրէն: Նա իւր խօսքերը ուղղում է Առ ամենայն հայապինս, յաւէտ առ հոգեւոր հայրն իմ Տ. Յակոբ սրբազան կաթուղիկոս: Նա դառնագին զանգատուում է կաթուղիկ կղերի ճնշումներից, մանաւանդ նոցա ձեռքին գործիք դարձած Թադէոս Համագասպեան մի անօրէն քահանայից՝ Այսպանեաց և անարգեաց զփառս իմ և առաքչին իմոյ Տ. Յակոբայ Հայոց կաթուղիկոսին: Այնուհետեւ այդ տպագրական գործը թէև շարունակուում են Ոսկանի եղբայր Աւետիս և քեռորդին Սողոմոն և տպում են Մաշտոցի բայց գործը գնալով զանդաղանում է և կանգ է առնում, մինչև որ Ոսկանի ընկերներից Մատթէոս Վանանդեցին թողնելով Մարսէլի գնում է Ամստերդամ, նոր տպարան է ձեռք բերում և տպում է շատ զբոքեր, Շարական ևլն: 1695-ին Թովմաս եպիսկոպոս Վանանդեցին իւր եղբորորդի Մատթէոս դպրին օգնութեան հասնելով տպում է Խորենացի:

Անշուշտ մեր նպատակը չէ հայկական տպագրութեան պատմութիւնն անել, այլ միայն մատնացոյց անել, թէ ինչ մասնակցութիւն ունեն այդ գործում Յակոբ կաթուղիկոսը և բարենորոգչական դպրոցը: Ժամանակի հայ վանական զբոքոյնները, առանձնապէս Զուգայի հովանաւորութեան ներքոյ՝ յառաջ բերին ուրեմն եկեղեցու յառաջադիմութեան ու բարեգարգութեան նախանձախնդիր մարդիկ, որոնք կտրում են աշխարհների չափափում են ամբողջ Եւրոպայ, ոտնատակ են տալիս Հռովմ, Մարսէլի, Ամստերդամ, ստեղծում են հայ տպարան և, անվերջ հալածանքների ենթարկուելուց յե-

տոյ, հետզհետէ տպում են ամենափոքր կրօնական զբուսած-ներից սկսած մինչև Աստուածաշունչ և Խորենացի: Տպագրութեան այս գործի մէջ անշուշտ Զուղայի դպրոցից դուրս եկած Ոսկան վարդապետը մի պատկառելի նահատակ է Հայ եկեղեցւոյ և նորա հայրապետի պատուի համար:

Յակոբ կաթուղիկոսը ուշադրութիւն դարձրեց այնուհետև Մայր Աթոռի և միւս վանքերի պայծառութեան վերայ: Ամէնից առաջ շահի հրամանով սա յաջողում է Էջմիածնապատկան դարձնել Վաղարշապատ գիւղը: Բայց դժբանով չբաւականանալով՝ նա զնում է Բաշ—Ապարանի (Քասախ), Թեղենեաց, Սանտոյի, Սեաւերի, Նորքի, Նորագեղի, Բաթլինջի, Բիւրականի և այլ բազմաթիւ գիւղերի տառա-նորդները, որոնցից Մուղնի գիւղը նուիրում է համանուն վանքին*: Այս գիւղերից ստացած եկամուտը գործ էր դընում յօգուտ Մայր Աթոռի: Փլիխպոս կաթուղիկոսի ժամանակից կիսատ մնացած զանգակատունը շարունակելու իրաւունք ստանալով, նա ջանք չէ խնայում որչափ կարելի է գեղեցիկ շինել. «Յօրնաջան նկարակերտութեամբ քանդակեալ ի վէմն յամենայն պատշաճաւոր տեղիս տեսակս զանազան կենդանեաց, գաղանաց, անասնոց, թռչնոց, բուսոց և տնկոց ևլն»։ 1658-ին վերջանում է դորա շինութիւնը և նուիրում է հրեշտակապետաց անուան: Զանդակատան շինութիւնը տալիս էր Էջմիածնի վանքին վեհութիւն, և զանգերի ձայնը ողևորութեան առիթ էր: Այսպէս է նկարագրում իւր ստացած տպաւորութիւնը մի ձաշոցի յիշատակարան գրողը. «Կատարեցաւ մեծածախս շինուածովք և սխրատեսակ, ճոխատեսակ ձեռակերտս հնչարանաց, յարեալ ընդ մեծի կաթուղիկէին և մօր եկեղեցեաց Հայաստանեայց, ուրանոր ձայնք բարձրագոյ զանգակաց առ տիւ առ գիշեր ըստ ժամու ժամու հնչեն և գոչեցուցանեն:—Վանքի ներսը Յակոբ կաթուղիկոսը և ժամանակի միաբանները յատուկ ուշք են դարձրել մասունքների վայելուչ պահպանութեան վերայ և յարմար պահպանակներ են շինել տուել, որոնց վերայ

* Տես. Զամբա 100—120:

գտնուած համառօտ արձանագրութիւններէց և հանում ենք այդ տեղեկութիւնը: Մասունքներից զատ նա աւելացնում է եկեղեցական անօթների թիւը. «Սովաւ և ի ձեռն սորին յաւելան սպասք յոլովք և անօթք բազմաթիւք՝ մեծի տաճարիս»:

Յակոբ կաթողիկոսի մեծագործութիւնների մէջ փոքր տեղ չեն բռնում, թէ՛ վանքի և թէ՛ Վաղարշապատ գիւղի վերաբերմամբ, նորա բերած աղբիւրները և նորա կազմած չորս լճակները: Քասախի տակով նա անց է կացնում ստորերկրեայ ջրանցքների որոնց մէջ հաւաքուած ջրի մի մասը բերում է վանքի հարաւային կողմը և դուրս հանում, ոռոգելու համար արտերը և այգիները, իսկ միւս մասը բերում է գիւղի մէջ և մացնում վանքի բակը: Այս ջրերի վերայ նա շինում է ջրաղացներ և բրնձահաններ: Իսկ նորա պատրաստած չորս լճակները, որոնցից մէկը շինած է Մօլլադուքունի մօտ, միւս երկուսը՝ Երևանի ճանապարհի վերայ, իսկ չորրորդը՝ Շօղլու գիւղի դիմաց, — ջրի ամբարների տեղ են ծառայում, որոնք ամառ ժամանակ ոռոգում էին ամբողջ վանքի և գիւղի անդ ու անդաստանները, նա այդ լճերը լցրեց ձկներով, իսկ շրջապատը զարգարեց ծառերով:

Սակայն Յակոբ կաթողիկոսը Մայր Աթոռին վերաբերող այս բազմաթիւ հոգսերի մէջ չէր մոռանում, որ ինքը մի վանքի վանահայր չէ, այլ Հայ ազգի հայրապետ, ուրեմն և իւր պարտաւորութիւնն էր աչալուրջ հսկողութեամբ բարեօրէն նաև միւս վանքերը: Արդարև նա իւր այս պարտականութիւնն ևս սրբութեամբ կատարել է: Զաքարիա պատմիչը վկայում է, որ նա միշտ «Նրջէր ի վանօրայս և զոր ինչ պահասութիւն տեսանէր վանիցն, թէ՛ հոգևոր և թէ՛ մարմնաւոր կարիսն՝ լցուցանէր»: Յայտնի է, որ սորա ժամանակն ևս շինուում կամ նորոգուում են բազմաթիւ վանքեր: Մուղնին նորա նիւթական և բարոյական օժանդակութեամբ է շինուում: Յովհաննավանքը աւելի շքեղանում և ծաղկում միաբաններով, խոր Վիրապը և Սանահին վանքերը նորոգուում են: Այս վերջին վանքի վերայ առանձնապէս հոգ տանելով՝ Սարգիս վարդապետ Արդութեանին նա եպիսկոպոս

է ձեռնադրում և մի կոնդակով 1661 թուին վանահայր կարգում: Նա այդ կոնդակի մէջ յայտնում է, որ հայրապետական իշխանութեամբ Սանահնի թեմի առաջնորդ կարգել է Սարգսին և այդ թեմի սահմանը որոշելուց յետոյ պատուիրում է սիրով օգնել նորան, կանոնական հաս և իրաւունք առանց արտունջի տալ, որպէս զի — «Ձոր ի մէջ ետես (Սարգիս) զկարգ ժամատեղաց և զպայծառութիւն եկեղեցւոյ և ի մէջ ձեր կարգաւորեսջիք»: Արդարեւ Սարգիս եպիսկոպոսը հայրապետի յոյսերը ի դերեւ չի հանում. նա նորոգում բարեգարդում է այդ վանքը: 1664-ին Յակոբ կաթողիկոսը հանդիպում է այնտեղ և գումարելով տեղի իշխաններին վանքի մօտիկ Ունակ գիւղը իբր նուէր վերցնում է նոցանից և տալիս վանքին:

Այսպիսի օժանդակութիւններից զատ նա, Զաքարիա պատմիչի ասելով՝ հայրապետական հրամանով «Հաստատեաց զի ամենայն տարի տացեն ամենայն վանից 10 լիար ձէթ վասն եկեղեցւոյն վասնելոյ և 20 լիար գինի ի պէտս երթեկեղաց»: Այս տեղեկութիւնը մի կողմից ցոյց է տալիս հայրապետի ընդհանուր և աչալուրջ հսկողութիւնը վանքերի վերայ և միւս կողմից այն, որ վանքերն այս ժամանակ ծառայել են իբրեւ իջևաններ կամ տափնջական վայրեր ճանապարհորդների համար: Եւ անշուշտ վանքերի այդ ծառայութիւնը մի այդպիսի ժամանակում, երբ ճանապարհորդները բաց երկնքի տակ պիտի մնային գիշերները, առանձին գնահատութեան արժանի է, գորանով վանքերն իրենց կոչման կը ծառայէին և կը կապէին իրենց հետ ժողովրդին. Յակոբ կաթողիկոսն իւր այս կարգադրութեամբ վանքերն ուրեմն մի մի բարեգործական հաստատութիւն էր դարձնում:

Յակոբ կաթողիկոսն այսպիսի մեծամեծ գործերի և արժանաւայել հովուապետութեան սրտածառով ժամանակակիցների հիացման և գովասանքին է արժանացել և ունեցել է նոցա վերայ մեծ հեղինակութիւն. նոյն իսկ Աղուանից եկեղեցին ստիպուած էր նորա հեղինակութիւնը ճանաչել: 1675 թուին վախճանուում է Գանձասարի Պետրոս կաթողիկոսը, և Արմէն անունով մի արեղայ օգուտ քաղելով այն հանդա-

մանքից, որ Յակոբ կաթուղիկոսը Պարսկաստանում էր զբա-
նուում, օծուում է ինքնագլուխ կերպով կաթուղիկոս, և
Գանձասարի եկամուտներով յղկացած, թուրք աղաների հեա
խանի կեանք է վարում: Յակոբ կաթուղիկոսը, հենց որ վե-
րադարձաւ, բանադրեց նորան և Աղուանքից կանչելով՝ Երե-
միա անունով մի արեղայի Էջմիածնում օծեց կաթու-
ղիկոս և ուղարկեց այնտեղ իւր յանձնարարական թղթե-
րով: Մի ժամանակ անցնելուց յետոյ նա ստիպուում է երկու
կաթուղիկոսներին ևս կանչել Մայր Աթոռ. որովհետեւ Սի-
մէոնը, յենուելով թուրք իշխողների վերայ, խռովութիւններ
էր հանում Երեմիայի դէմ: Այստեղ Ս. Էջմիածնում Սիմէոնը
ստիպուում է կաթուղիկոսութիւնից հրաժարուել և բա-
նադրանքից ազատուելով՝ դառնում է Աղուանք Երեմիայի
հետ, որը 1677-ին Յակոբ կաթուղիկոսի կոնդակով կրկին
հաստատուում է Աղուանից կաթուղիկոս:

Հայրապետի հեղինակութիւնը տարածուում է նաև
թուրք իշխանների և Երեւանի խաների վերայ: Յայտնի է,
որ Երեւանի Նաճաֆ—Ղուլի և սորա յաջորդ Աբաս խա-
ները շատ բարեկամական յարաբերութիւն էին պահպա-
նում կաթուղիկոսի հետ, վերջինս մանաւանդ մի այդի նուէր
է տալիս Էջմիածնին և յաճախ եկեղեցի գալով հանդիսատես
է լինում եկեղեցական արարողութիւններին ու առատ նուէր-
ներ բաժանում բոլորին: Բայց նորա յաջորդ Սաֆի խանը,
ազգաւ լեզգի, կամեցաւ խլել կաթուղիկոսից նորա մի լիճը, որ
ամենագեղեցիկն էր և զարդարուած ծառերով. այս յափըշ-
տակութիւնը արգելելու համար նա զիմեց ուղղակի Շահին,
և խանը վախենալով՝ կէս ճանապարհից նորան յետ դար-
ձրեց և կալանաւորեց Ս. Անանիայի վանքում: Սակայն ե-
ռանդուն Հայրապետը չնայելով իր ծերութեանը, խոյս է
տալիս վանքից և Ղարաբաղի վերայով դիմում է Ասպահան,
ու մի խնդրադրով, ուղղած Շահ Սիւլէյմանին, խանին պաշ-
տօնանկ է անել տալիս, իսկ ինքը արքունական խիլայ, գե-
ղեցիկ ոսկենկար պատմութեան, պատուական դօտիս սամոյրի
վերարկու և մի գեղեցիկ երիւար նուէր ստանալով և իւր
ցուցման համաձայն Գափրիժի խանի որդի Սաֆի իշխանին

Երեւանի խան նշանակել տալով, դառնում է Մայր Աթոռ: Բայց այս խանն ևս պէտք եղած բարեկամական յարաբերութիւնը չպահպանեց կաթողիկոսի հետ, չնայած որ՝ Զաքարիա պատմիչի ասելով, խանի շահից տրուած հաստատութեան թղթի մէջ գրուած էր. «Առանց կաթողիկոսին մի՛ ինչ արասցես»: Գուցէ, հէնց այդ բանը նորա չարանալուն առիթ է տուել, ինչպէս «Եւ դժուարին թուեցաւ նմա և ընդ ակամբ հայեր» խօսքերով ակնարկում է նոյն պատմիչը: Բայց և այնպէս այս խանն ևս սաստիկ վախենում էր նորանից: Այսպէս, երբ Յակոբ կաթողիկոսը աթոռական դորձերի համար Տփլիս էր գնացել, խանը կարծում է, թէ գնացել է իրեն պաշտօնանկ անել տալու և իր իշխաններին մէկին ուղարկում է այնտեղ, որ խնդրէ նորան յետ դառնալ, իսկ նա իշխանին հաւաստիացնելով, որ խանի դէմ ոչինչ չունի, շարունակում է իր ճանապարհը դէպի Ա. Պոլիս:

Սակայն Ա. Հայրապետի վերջին տարիներն անցան խռովութիւնների մէջ, որ վշտացրեց նորա ծերութիւնը: Լեհահայերը սորա օրով արդէն սառել էին Մայր Աթոռից: Նորա այնտեղ ուղարկած Յովհաննէս Իլվովցի վարդապետը ստիպուած էր խոյս տալ Նիկոլի, Գոմինիկեան և Յիսուսեան քարոզիչների ձեռքից: Իսկ Տաճկաստանում խռովութիւնները գնալով բորբոքւում էին և աւելի մեծ վտանգ էին սպառնում:

Տեսանք, որ Ա. Պոլսում առ ժամանակ լազարութիւն հաստատուեց Փիլիպպոսի Զանքերով. բայց այդ աւական չեղաւ. նորա հեռանալով նորից պատրիարքութիւնը կռուածադի էր դարձել սնտուռ և տգէտ հոգևորականութեան ձեռքին: Այդ խռովութիւններից օգուտ են քաղում Երուսաղիմի յոյները և խլում են հայերից Ա. Յակովբի վանքը, որով Երուսաղէմի պատրիարքութիւնն ևս յուզեալ դրութեան մէջ է ընկնում: Յակոբ կաթողիկոսի Ա. Պոլիս ուղարկած նուիրակը Մայր Աթոռի հասոյթներով ձոխացած՝ կաշառքի միջոցաւ դառնում է պատրիարք, և որովհետեւ իր նախորդը թշնամական դիրք էր բռնել Եջմիածնի նկատմամբ, սա Եջմիածնապէր ձեռնալով կամենում է հայրապետից ստանալ

Հաստատութեան կոնդակ. բայց նա ընդհակառակն անվաւեր է համարում նորա պատրիարքութիւնը: Այսպիսով խռովութիւններն աւելի մեծանում են: Սոց Թոքոթ շուրջն ևս յուզում է սկսում. այնտեղ երկու հակաթու կաթուղիկոսներ են նստում: Այս խռովութիւնների միջ հետզհետէ առաջ է գալիս Եղիազար վարդապետ Անթապքին, իւր անչափ հարստութեամբ և փառասիրութեամբ, իւր պերճախօսութեամբ և շինարարութեամբ: Սա Կ. Պոլսում, ապա Երուսաղէմում և Ռամլայում շատ շինութիւններ է անում, կանգնեցնում է մի փառաւոր եկեղեցի Էջմիածին անունով և, դաշն կապելով Սաի Խաչատուր կաթուղիկոսի հետ՝ օծում է կաթուղիկոս արեւմտեան հայերի վերայ: Իւր խորամանկութեամբ և զբաւիչ լեզուով նա շատերին հրապուրում է, մանաւանդ որ Յակոբ կաթուղիկոսի նորա գործը խանդարելու համար ուղարկած մարդիկ յարում էին այն կուսակցութեանը, որ ամենից շատ ատելի էր ժողովրդին. իսկ ինքը Յակոբ կաթուղիկոսը իրար յետևից օրհնութեան կոնդակներ էր գրում, յորդորելով ժողովրդին չքաժանել, չերկառակել Մայր Աթոռը: Նորա թղթերը ամէն կողմից ընդունուեցին, և Եղիազարը ստիպուած էր Երուսաղէմից դադարագողի գնալ Կ. Պոլիս և վերստին հաստատման հրովարտակ ստանալ. թէպէտ Միրզա և Խոսրով արեւելքի վաճառականները շատ աշխատեցին, որ չհաստատուէր, բայց չյաջողեցան: Պետութեան շահը, որը լաւ էր հասկանում Քեօփրիւլի Ահմետ անունով եպարքոսը, պահանջում էր որ Հայոց կաթուղիկոսը Տաճկաստան նստի, և Եղիազարը, Ապրօ Զէլէպի կոչուած մի հարուստի ձեռնառութեամբ, ոչ միայն հաստատուում է կաթուղիկոս, այլ նաև պատրիարք Երուսաղէմի: Զաքարիա պատմի վկայութեամբ Եղիազարը Էջմիածնում ունէր իրր համախոհ Ռոփրիոս անունով մի վարդապետ, որ շրջեր ի վանօրայս և արծարծէր զչարութիւն իւր: Այս մարդը իւր անառակ և ըմբոստ վարքի համար դժգոհ էր կաթուղիկոսից և շրջելով վանքերը իւր շուրջն էր խմբում բոլոր դժգոհներին. թղթեր էր գրում Տաճկաստան, Յակոբ կաթուղիկոսի վարկը ձգում էր և զրկում

Եղիազարին իր գործը գլուխ հանել:

Յակոբ կաթուղիկոսը Եղիազարի հաստատութեան լուրն առնելով՝ կանչում է իւր ձեռնասուն աշակերտներից Իսահակ Մակուեցուն, տեղապահ կարգում, իսկ ինքն ուղեորութեամբ է Կ. Պոլիս: Հասնելով Կարին՝ նա լսում է որ Մայր Աթոռում Անուիրիոսը խռովութիւններ է հանում, ուստի և դառնում է Եջմիածին: Անուիրիոսը ստիպուած, 1666-ին, գնում միանում է Եղիազարին: Մայր Աթոռը խաղաղացնելուց յետոյ, Յակոբ կաթուղիկոսը գնում է Կարինի վերայով Երուսաղէմ: Այդ ժամանակ Եղիազարը Կ. Պոլսում, արքունի պաշտպանութեամբ ձոխացած, իր կաթուղիկոսութեան տօնն է կատարել տալիս և եօթն եպիսկոպոս ձեռնադրում, մինչ Յակոբ ընդհակառակն Երուսաղէմում պարտքի տակ է ընկնում և չարչարութեամբ պարտաւէրներից: Ապա նա ստիպուում է թողնել Երուսաղէմը, ուր սպասում էր Եղիազարի գալը՝ տեան և գնալ Կ. Պոլիս այն ժամանակ, երբ Եղիազարը նաւում էր Երուսաղէմ: Հասնելով Իւսկիւտար՝ Յակոբ մի խորհրդակցութիւն է ունենում Ապրօ Զէլէպիի հետ, նորան հասկացնում, որ ինքը փառասիրութիւնից չէ հետամուտ լինում խանգարելու Եղիազարի կաթուղիկոսութիւնը, այլ չի կամենում որ Մայր Աթոռը երկպառակուի: Ապա մտնելով Կ. Պոլիս, իւր հեղահամբոյր բնաւորութեամբ ժողովրդի սէրը գրաւում է և ոչ միայն կարողանում է իր պարտքերը վճարել, այլ նաև մօտենում է Կ. Պոլսի ազգեցիկ շրջաններին և առնում է հրովարտաւորի որի ուժով համարուում է Տաճկաստանի կաթուղիկոս, Երուսաղէմի պատրիարքութեան պաշտօնում հաստատել է տալիս Մարտիրոս վարդապետին, Կ. Պոլսի պատրիարքութիւնը յանձնում է Սարգիս Թէքիրդաղցուն, իսկ ինքը վերադառնում է Եջմիածին 1669-ին: Այստեղ նա նախօրօք ուղարկել էր Անուիրիոսին, որը Կ. Պոլսում առ երես զղջալով իւր մեղքերը, կարողացել էր կաթուղիկոսի սիրտը շահել և աթոռակալ անունով վերադառնալ Եջմիածին, կրկին մեծամեծ չարիքներ գործել, միաբաններին նեղել: Աթոռի անունով նա պարտքեր էր վերցրել և մխիւ էր. այնպէս որ երբ կաթուղիկոսը վերադարձաւ Պոլ-

սից և Սաֆի խանին պաշտօնանկ արաւ, Եջմիածնում հանդիսաւորապէս խուզել տուաւ Անոփրիոսի մօրուքը և ուղարկեց Սևան, որտեղ և մեռաւ:

Սակայն Եղիազարը իւր աղգափնաս գործից յետ չկացաւ. ընդհակառակը հէնց որ Յակոբը Կ. Պոլսից հեռացաւ՝ դիմելով այնտեղ, նորից հրովարտակ ձեռք բերաւ, որով իբրաւունք էր ստանում Տաճկաստանի սահմաններում կաթողիկոսութիւն անելու: Յակոբ կաթողիկոսը խորապէս վշտացած, մանաւանդ Անոփրիոսի պատճառով պարտաւէրներից ներդուած, ութսունամեայ հասակում, Տփլիսի վերայով Պոլիս գնաց, նախապէս տեղապահ նշանակելով Ստեփաննոս Ելվովցուն: Կ. Պոլսում նա մի թուղթ է գրում Եղիազար կաթողիկոսին՝ զալ իր մօտ ու վերջ տալ երկպառակութեանը. բայց Եղիազարը տօների պատճառով երուսաղէմում ուշանում է, որի ժամանակ Յակոբ կաթողիկոսը հիւանդանալով՝ վախճանուում է 1680 թուի օգոստոս 2-ին: Նորան մեծ պատուով թաղում են Պէյ—Օղլի Հայոց գերեզմանատանը:

Ահա այսպիսի դժբաղդ վախճան ունեցաւ երջանկայիշատակ և բազմաշարժար մեծ կաթողիկոսն Յակոբ, որի հայրապետութիւնը սկսուեց այնպէս յաջողութեամբ:

Մ. Խ.



Հայոց երեք Աղօթից Պահեր (Ժամանակ) եւ ինն Աղօթից Ժամեր. Զուարթնոց եկեղեցւոյ Արեգակնային Ժամացոյց. Կաթողիկէ եկեղեցւոյ յունարէն արձանագրութիւն եւ ինն դաս Զուարթունք:

Զորրորդ և հինգերորդ դարերի մատենաների կարգում չկայ և չունենք մի յատուկ գիրք կամ յիշատակարան, որի